Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ. 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.814592
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2014-05-23
1.5 ՀՎՀՀ-ն		02628286
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)98016644
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.tuf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		d.arakelyan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ելենա Մուրադյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	10	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Բարեգործական նախաձեռնություններ Հայաստանի համար	460,509,147
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Իրական միջոցներ		

Digitally signed by MUSAYELYAN MARIAM 6310730134
Date: 2025.07.02 09:36:35 AMT

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Գյումրի քաղաքի Բարեկամության զբոսայգու վերականգնում և զարգացում	287,328,600	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	287,328,600	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 12 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Զբոսաշրջության և Քաղաքաշինության Բարեգործական Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Զբոսաշրջության և Քաղաքաշինության Բարեգործական Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Զբոսաշրջության և Քաղաքաշինության Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբինը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան	Էմիլ Վասսիլյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն	Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2025

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Եկամուտ անսահմանափակ օգտագործման ֆոնդերից	5	472,932	795,199
Եկամուտ սահմանափակ օգտագործման ֆոնդերից		-	47,143
Եկամուտ սեփական օգտագործման ֆոնդերից	13	54,436	146,540
Ծառայությունների մատուցումից եկամուտ	6	117,499	82,127
Փոխառությունների զիջումից եկամուտ	11.2	172,357	-
Եկամուտ պետական աջակցությունից		-	11,097
Այլ եկամուտ		1,590	4,785
Վաճառքի ինքնարժեք	6	(96,981)	(150,226)
Ծրագրային ծախսեր	7	(91,409)	(239,105)
Նվիրաբերությունների գծով ծախսեր	8	(345,407)	(529,529)
Վարչական և այլ ծախսեր	9	(141,264)	(289,276)
Դեբիտորական պարտքերի դուրսգրումից ծախսեր		-	(5,859)
Ֆինանսական ծախսեր		(12,709)	(25,677)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)		7,639	(3,206)
Շահութահարկի գծով ծախս		(1,026)	-
Արդյունք մինչև հարկերը		**137,657**	**(155,987)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**137,657**	**(155,987)**

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ		45,561	49,718
Հիմնական միջոցներ	10	376,787	395,998
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		18,000	99,091
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**440,348**	**544,807**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		6,631	5,008
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		26,672	34,800
Տրամադրված փոխառություններ		22,100	22,100
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	36,704	5,630
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**92,107**	**67,538**
Ընդամենը ակտիվներ		**532,455**	**612,345**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		(368,019)	(505,676)
Ընդամենը զուտ ակտիվներ		**(368,019)**	**(505,676)**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Սեփական օգտագործման ֆոնդեր	13	342,900	293,719
Ստացված փոխառություններ	11.2	7,000	176,973
Վարձակալության գծով պարտավորություններ		13,062	18,060
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**362,962**	**488,752**
Ընթացիկ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		39,070	83,581
Սահմանափակ օգտագործման ֆոնդեր	5	196,308	222,169
Ստացված փոխառություններ	11.2	255,918	239,489
Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս		8,116	8,889
Սեփական օգտագործման ֆոնդերի ընթացիկ մաս	13	38,100	75,141
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**537,512**	**629,269**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**532,455**	**612,345**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 30-ին՝

Ելենա Մուրադյան
Տնօրեն

Դավիթ Առաքելյան
Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին համախմված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**Կուտակված արդյունք**
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	**(349,689)**
Տարվա արդյունք	(155,987)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	**(155,987)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(505,676)**
Տարվա արդյունք	137,657
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**137,657**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(368,019)**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից ստացված դրամական միջոցներ	460,481	1,039,138
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	118,961	113,203
Տրամադրված նվիրատվություններ	(13,635)	(100,202)
Մատակարարներին և աշխատակիցներին վճարված գումարներ	(479,978)	(873,966)
Այլ դրամական հոսքեր	(2,709)	(4,463)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**83,120**	**173,710**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(67,867)	(115,509)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,398)	(15,683)
Տրամադրված փոխառություններ	-	(48,500)
Տրամադրված փոխառությունների մարում	-	26,400
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(71,265)**	**(23,222)**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված երկարաժամկետ փոխառություններ	28,000	130,896
Երկարաժամկետ փոխառությունների մարում	(6,000)	(154,118)
Վճարված տոկոսներ	(44)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**21,956**	**23,222**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	33,811	(2,804)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(2,737)	286
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	5,630	8,148
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	**36,704**	**5,630**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Զբոսաշրջության և Քաղաքաշինության Բարեգործական Հիմնադրամ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.07.2025 09:35